Հավելված 3

**«1032-11002/2025-ԱԿ» ծածկագրով**
**դրամաշնորհային մրցույթի հրավերի**

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Արտաշատ) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ԱԿ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-31.12.25 |
| Ներկայացման օր | 22.12.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան/ծրագրի ղեկավար/ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրով նախատեսված և հաշվետու ժամանակաշրջանին համապատասխանող հիմնական գործողություններն են.

1)խնամքի ծառայություններ հայցող ուղեգրված շահառուի անհատական սոցիալական կարիքի գնահատում և գնահատված սոցիալական կարիքին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում.

2)անհատական սոցիալական ծրագրի կազմում և վերանայում

3)խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

Հաշվետու ժամանակահատվածում շահառուներ թիվը եղել է՝

- Հոկտեմբեր-25 շահառու
- Նոյեմբեր- 25 շահառու

- Դեկտեմբեր- 25 շահառու

Շահառուներին մատուցվող ծառայությունները հստակ տարանջատված են, և նրանց հետ աշխատում է բազմամասնագիտական թիմ՝ սոցիալական աշխատող, սոցիալական խնամողներ, բուժքույրեր: Ծրագրի աշխատանքային թիմը այցելում է շահառուներին՝ ըստ նախապես կազմված գրաֆիկի՝ իրականացնելով ծրագրով նախատեսված և շահառուի կարիքներից բխող գործողություններ: Բոլոր շահառուների համար ի սկզբանե իրականացվում է կարիքի գնահատում, որի արդյունքների հիման վրա կազմվում է անհատական սոցիալական ծրագիր:
Ըստ բացահայտված կարիքների իրականացվում է՝

ա) խնամքի, կենցաղային սպասարկման և սոցիալական ծառայությունների տրամադրում,
բ) բժշկական օգնության կազմակերպում և տրամադրում,
գ) սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում,
դ) խորհրդատվության տրամադրում, ուղեկցման ծառայություններ,
ե) սննդի և դեղորայքի տրամադրում,
զ) ժամանցի կազմակերպում՝ տարբեր մշակութային միջոցառումների միջոցով:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ներգրավված 25 շահառուները ստացել են սոցիալական խնամքի ծառայություններ՝ համաձայն յուրաքանչյուր շահառուի համար նախատեսված շաբաթական գրաֆիկի:
Բացի պլանային այցելություններից, շահառուները ստացել են նաև լրացուցիչ ծառայություն՝ ըստ կարիքի:
***Սոցիալական խնամողների*** կողմից կատարվել է՝

- տան մաքրում, հարդարում,
- անկողնային պարագաների և հագուստի փոխում,
- գնումներ,
- կոմունալ վճարումներ,
- սպասքի լվացում,
- լվացքի կազմակերպում,
- լոգանք/լվացում,
- մարմնի մասնակի խնամք՝ եղունգների խնամք,
- կերակուրի պատրաստում և կերակրում,
- միջնորդական ծառայություն դեպի այլ հաստատություններ և այլն:

25 շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների շնորհիվ շահառուն ապահովված է իրեն անհրաժեշտ ապրանքներով: Կոմունալ վճարների մուծման շնորհիվ շահառուն իրեն ապահովված է զգում: գործողությունների իրականացման

կատարողականը ամրագրվում է ծառայությունների մատուցման ստուգաթերթում և շահառուի ստորագրությամբ՝ շահառուի մոտ գտնվող ամսական ընթացիկ ծառայությունների տնային թերթիկում:

Հաշվետու ժամանակահատվածում ամսական 1 անգամ 21 շահառուի լվացքը տեղափոխվել է կենտրոն՝ իրականացվել է լվացում, արդուկում և հետվերադարձ շահառուին: Մնացած 4 շահառուների դեպքերում լվացքը իրականցվում է շահառուի տանը՝ սոց. խնամողի օգնությամբ:
***Բուժքույրի կողմից*** կազմակերպվել և տրամադրվել է բժշկական աջակցություն՝ առողջության պահպանման նպատակով, ինչի շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների առողջական վիճակը: Առողջապահական ծառայություններ են տրամադրել 25 շահառուներին՝ կատարելով տունայց՝ համաձայն շաբաթվա գրաֆիկի: Տնային այցելությունների ժամանակ կատարվել են հետևյալ աշխատանքները՝ շահառուի առողջական վիճակի և դեղորայքի ընդունման մշտադիտարկում, արյան ճնշման, ինչպես նաև արյան մեջ շաքարի մակարդակի քանակի չափումներ, միջմկանային ներարկումներ, վիրակապում, խորհրդատվություն և այլն:
Կազմակերպվել է ամբուլատոր և պոլիկլինիկական ծառայություն պլանային այցելություններ՝ համագործակցելով ընտանեկան բժշկի հետ, թվով 3 հավելյալ այց՝ առողջական այլ հարցերի կարգավորման նպատակով նաև 2 տարեց բուժքրոջ օգնությամբ ուղեկցվել է բուժ հաստատություն հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Հոկտեմբեր՝

- Արյան ճնշման չափում-25 շահառու
- Շաքարի չափում արյան մեջ - 7 շահառու
- Ջարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում-25 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք – 1 շահառու
- Դեղորայքի ընդունում/ վերահսկում- 23 շահառու
- Մշտական կապ՝ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ-25շահառու
- Միջնորդական ծառայություն- 5 շահառու
- Մշտադիտարկում - 25 շահառու
- Բժշկական քարտերի ստացման աշխատանքներում բուժքույրի ներգրավվածություն 3 դեպք

Նոյեմբեր՝

- Արյան ճնշման չափում-25 շահառու
- Շաքարի չափում արյան մեջ - 5 շահառու
- Ջարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում-25 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք – 0 շահառու
- Դեղորայքի ընդունում/ վերահսկում- 24 շահառու
- Մշտական կապ՝ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ- 25շահառու
- Միջնորդական ծառայություն- 7 շահառու
- Մշտադիտարկում - 25 շահառու
- Բժշկական քարտերի ստացման աշխատանքներում բուժքույրի ներգրավվածություն 5 դեպք

Դեկտեմբեր՝

- Արյան ճնշման չափում 25 շահառու
- Շաքարի չափում արյան մեջ - 6 շահառու

- Զարկերակային հաշվում, ջերմաչափում, վերահսկում-25 շահառու
- Վիրակապում, վերքի խնամք – 0 շահառու
- Դեղորայքի ընդունում/ վերահսկում- 25 շահառու
- Մշտական կապ՝ պոլիկլինիկաների և ընտանեկան բժիշկների հետ 25շահառու
- Միջնորդական ծառայություն- 2 շահառու
- Մշտադիտարկում - 25 շահառու
- Բժշկական քարտերի ստացման աշխատանքներում բուժքույրի ներգրավվածություն-2 դեպք

Բուժքրոջ կողմից այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում:

***Սոցիալական աշխատողի*** կողմից յուրաքանչյուր ամիս իրականացվել է այցելություն 25 շահառուներին, բացահայտվել են սոցիալական կարիքները և ըստ անհրաժեշտության տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն: Այցերի վերաբերյալ նշումները կատարված են ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև տնային թերթիկում:
Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը իրականացրել է նոր շահառուների մշտադիտարկում, կարիքների գնահատում աշխատանք այլ կառույցների հետ՝ ուղեգրման գործընթացի կազմակերպում, խորքային գնահատում, անձնական գործի թղթապանակի կազմում/ անձնագրային տվյալների, զբաղվածության, առողջական վիճակի, հաշմանդամության կարգի/, պայմանագրի կնքում և այլն: Աջակցություն է ցուցաբերվել Արցախից բռնի տեղահանված Գայա Ղազարյանին, նրա համար տրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դիմում և հավաքագրվել են պահանջվող փաստաթղթերը:
Ուղեգրումների ժամանակահատվածի ողջ ընթացքում սոցիալական աշխատողը եղել է տարեցների կողքին /բուժզննումների անցկացում, ծրագրային մեքենայով տարեցի տեղափոխություն այլ կառույցներ և այլն/:

***Սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ*** են տրամադրվել 25 շահառուի, որտեղ ներառված են շահառուներին անհրաժեշտ սննդամթերքներ, իսկ հիգիենիկ փաթեթների մեջ ներառված են առաջին անհրաժեշտության պարագաներ: Փաթեթների բաշխման գործընթացը իրականացրել են ծրագրային թիմի աշխատակիցները կամավորների հետ միասին:

«Ա» խմբի շահառուների համար, որոնք ունեն շարժունակության խնդիր, պոլիկլինիկաներից դեղորայքը ձեռք է բերվել ծրագրի բուժքույրի կողմից, ով լիազորված է շահառուի կողմից՝ իր փոխարեն դեղորայք ստանալ և հանձնել շահառուին:
Տարեցների առողջական վիճակը պահպանվում և բարելավվում է հատուկ ու առաջնային անհրաժեշտության դեղամիջոցների և սննդի տրամադրման շնորհիվ:

Ծրագրային թիմի կողմից շահառուի համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելիություն, անհրաժեշտ սոցիալական խորհրդատվության, անհրաժեշտ դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն: Շահառուները միայնակ չեն, համարձակ են և ինքնավստահ:

Հոկտեմբերի 1-ին Տարեցների տոնի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ այց դեպի Արտաշատի Ամո Խարազյանի անվան թատրոն՝ դիտելու Շիրվանզադեի «Արտիստը» ներկայացումը, որից հետո այցելել են Արտաշատի «Սուրբ Հովհաննես» եկեղեցի: «Հայկական Կարիտաս»-ի «Կառուցենք կամուրջներ» ծրագրի շրջանակներում հարդարվել են ծրագրի շահառուների մազերը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հայկական Կարիտասի «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակում՝ «Տարեցների տնային խնամք Արտաշատում» ծրագրի հետ համագործակցությամբ Արցախից բռնի տեղահանված կանայք կամավոր և լիովին անվճար տրամադրեցին իրենց ծառայությունները Հայկական Կարիտասի «Տարեցների տնային խնամք Արտաշատում» ծրագրի շահառուներին:
https://www.facebook.com/photo/?fbid=1245579164273015&set=pcb.1245589537605311
«Արժանապատիվ կյանք տարեցների համար» ծրագրի շրջանակներում «Հայկական Կարիտաս»-ի տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող ծրագրերի աշխատակիցների համար կազմակերպվեց մասնագիտական հանդիպում՝ պալիատիվ խնամք թեմայով:
https://www.facebook.com/share/p/1Ajq7MgqjH/?mibextid=wwXIfr

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ չեն ծագել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագիրն ավարտվում է 2025 թվականի դեկտեմբերի 31-ին:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

«Հայկական Կարիտաս»-ի այլ ծրագրերի շրջանակներում անձնակազմի անդամները մասնակցել են տարբեր դասընթացների

- «Արժանապատիվ կյանք տարեցների համար» ծրագրի շրջանակներում «Հայկական Կարիտաս»-ի տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող ծրագրերի աշխատակիցների համար անցկացվել է հոգեբանական սուպերվիզիա՝ պալիատիվ խնամք թեմայով:
- «Տնային խնամքի խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակում Նոյեմբերի 27ին «Բուժքույրական խնամք» թեմայով պրակտիկ դասընթաց է անցկացվել Կարիտաս Վրաստանի մասնագետների կողմից

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 15 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 11 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 24 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 4 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա -3<br>Բ - 22 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 10 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 25 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | - |

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ա.Մանգասարյան

---------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

---------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ա.Մանգասարյան | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն<br>Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ----------------------------------------<br>(ստորագրություն) | ----------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |